ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"27" դեկտեմբերի 2024թ. N 76-Հ

ՀՐԱՄԱՆ

ԹՌԻՉՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 572-Ն որոշմամբ և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Ն որոշմամբ հաստատված Տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարության կանոնարության 19-րդ կետի 20-րդ մասով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սկսած 2025 թվականի հունվարի 1-ից ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր թռիչքների իրականացման թույլտվությունների տրամադրումը իրականացնել էլեկտրոնային եղանակով:

2. Կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր թռիչքների թույլտվությունների իրականացման հայտերի ընդունման և դրանց թույլտվությունների տրամադրումը 2025 թվականի հունվարի 1-ից իրականացնել ավիացիայի ոլորտի թվային ծառայությունների aviation.e-gov.am հարթակի միջոցով:

3. Հաստատել էլեկտրոնային եղանակով կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր թռիչքների թույլտվությունների իրականացման հայտերի ընդունման և թույլտվությունների

տրամադրման ավիացիայի ոլորտի թվային ծառայությունների aviation.e-gov.am հարթակի կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

4. Լիազորել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ոլորտը համակարգող նախարարի տեղակալին՝ նախարարության անունից հաստատել կամ մերժել թռիչքների թույլտվությունների իրականացման հայտերը:

12/27/2024

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք.Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
2024 թվականի դեկտ. 27-ի
N 76-Լ հրամանի

Կարգ

էլեկտրոնային եղանակով կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր թռիչքների թույլտվությունների իրականացման հայտերի ընդունման և թույլտվությունների տրամադրման ավիացիայի ոլորտի թվային ծառայությունների aviation.e-gov.am հարթակի կիրառման

1. Սույն կարգով կարգավորվում են էլեկտրոնային եղանակով կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր թռիչքների թույլտվությունների իրականացման հայտերի ընդունման, թույլտվությունների տրամադրման և ավիացիայի ոլորտի թվային ծառայությունների aviation.e-gov.am հարթակի (այսուհետ՝ Հարթակ) կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի նպատակն է ապահովելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի ««Օտարերկրյա օդանավ շահագործողների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր առեվտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» N 1005-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի «Հայաստանի Հանրապետության օդանավ շահագործողների կողմից Հայաստանի

Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առեվտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություններ տալու կարգը հաստատելու մասին» N 1006-Ն որոշումների կատարումն էլեկտրոնային եղանակով:

3. Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված կարգով կանոնավոր և երկու և ավելի ոչ կանոնավոր թռիչքների կատարման թույլտվություն ստանալու նպատակով հայտերը (այսուհետ՝ Հայտ) Հարթակի միջոցով կարող են ներկայացնել օդանավ շահագործող, օդանավի սեփականատեր հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձը կամ իրենց ներկայացուցիչները (այսուհետ՝ Հայտատու):

4. Հայտը Հայտատուն ներկայացնում է էլեկտրոնային եղանակով Հարթակի միջոցով, սույն կարգի 2-րդ կետով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ժամկետում:

5. Հայտին կից Հայտատուն էլեկտրոնային եղանակով կցում է սույն կարգի 2-րդ կետով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված փաստաթղթերը:

6. Հայտը համարվում է ներկայացված, երբ Հայտատուն ստանում է Հայտի ներկայացման մասին Հարթակից համապատասխան ծանուցում:

7. Հայտատուի կողմից ներկայացված Հայտին ի լրումն կարող են ներկայացվել լրացուցիչ տվյալներ կամ որոշակի ներկայացված փաստաթղթերի փոփոխված տարբերակ(ներ):

8. Հարթակի միջոցով Հայտը ստանում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության Թռիչքների թույլտվությունների բաժնի պետը (այսուհետ՝ Բաժնի պետ):

9. Բաժնի պետը Հայտը ստանալուց հետո Հայտը ուսումնասիրության և մշակման նպատակով ուղարկում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության Թռիչքների թույլտվությունների բաժնի աշխատակիցներից մեկին (այսուհետ՝ Աշխատակից):

Միաժամանակ, կարծիքներ ստանալու նպատակով՝ Հայտը Բաժնի պետը կարող է ուղարկել համաձայնեցման ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համապատասխան ստորաբաժանման ղեկավարներին:

10. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի համապատասխան ստորաբաժանման ղեկավարները յուրաքանչյուրն իր մասով ուսումնասիրում է Հայտը և տալիս կարծիք Հայտի բավարարման կամ մերժման վերաբերյալ:

11. Աշխատակիցը ամփոփելով ստացված կարծիքները նախապատրաստում է Հայտի բավարարման կամ մերժման փաստաթուղթը և ներկայացնում է այն Բաժնի պետին:

12. Հայտի բավարարման և մերժման դեպքում Բաժնի պետը համապատասխան թույլտվությունը ուղարկում է հաստատման ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվության վարչության պետին (այսուհետ՝ Վարչության պետ), իսկ Վարչության պետը իր հերթին ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

Միաժամանակ Հայտի բավարարման դեպքում Հայտատուն ծանուցվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն հարթակին ինտեգրված պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով վճարումը կատարելու մասին: Վճարման մանրամասները արտացոլվում են Հայտի վերաբերյալ տվյալներում:

13. Հայտի մերժման դեպքում Հայտատուն Հարթակի միջոցով ծանուցվում է Հայտի մերժման մասին: Մերժման մասին ծանուցումն իր մեջ ներառում է հիմքերը և հիմնավորումը:

14. Հայտի հաստատման կամ մերժման մասին ծանուցումը Հարթակի միջոցով տեղեկացվում է Հայտատուին և Կոմիտեի Կենտրոնական կարգավարական ծառայությանը:

15. Կոմիտեի Կենտրոնական կարգավարական ծառայությունը հայտի հաստատման մասին տեղեկատվությունը ուղարկում է շահագրգիռ ծառայություններին:

16. Յուրաքանչյուր հաստատված Հայտի թույլտվությունը ստանում է Հարթակի միջոցով հերթական համար:

17. Բոլոր ներկայացված Հայտերը պահպանվում են Հարթակի համապատասխան բաժնում: